ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 18 մայիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
2-րդ դատական կազմը
Նախագահությամբ՝ Կ.Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Պողոսյանի
Հ.Նազարյանի

Քննության առնելով քաղաքացի Ալբերտ Մովսեսյանի թիվ 4-168 դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Ա. Մովսեսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Ա. Մովսեսյանը միջնորդել է իրեն ազատել պետական տուրքի վճարումից՝ հաշվի առնելով իր նյութական ծանր վիճակը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Ա. Մովսեսյանի դիմումը՝ «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

Ա. Մովսեսյանին ազատել պետական տուրքի վճարումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ